

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆԻ 1760 Թ. ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Քրիստինե Կոստիկյան

Պատմական գիտությունների դոկտոր
Մ. Մաշտոցի անվան Մատենադարան
ՀՀ, Երևան, Մաշտոցի պողոտա 53
Էլ. հասցե՝ kr.kostikyan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 25.02.2023, գրախոսվել է 01.08.2023, ընդունվել է տպագրության 07.08.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.2-9

Ներածություն

Ամենայն հայոց կաթողիկոսների կողմից Հայոց եկեղեցու և իրանահպատակ հայության զանազան իրավունքների, ինչպես նաև որոշ արտոնությունների հաստատման ու պաշտպանության նպատակով ձեռք բերված հրովարտակաները մատնանշում են այն իրողությունը, որ Հայոց եկեղեցին իրանական իշխանությունների կողմից ընդունված կրոնական հաստատություն և միջնորդ օղակ էր իրանահպատակ բնակչության հետ փոխհարաբերություններում:

Իրանի Սեֆյան և հետագա շահերի տիրապետության ժամանակաշրջանում թե՛ Էջմիածնի և թե՛ Աղվանից կաթողիկոսների կաթողիկոսական իրավունքները հաստատվում էին շահական հրովարտականերով. ընդ որում, նոր շահի գահակալման դեպքում կաթողիկոսը պարտավոր էր ձեռք բերել իր իրավունքները վերահաստատող նոր հրովարտակ: Այսպիսով, Մատենադարանի կաթողիկոսական դիվանում գտնում ենք իրանական տիրապետության շրջանի գրեթե բոլոր կաթողիկոսների իրավունքները հաստատող հրովարտակաները: Իրանական իշխանությունները կաթողիկոսին դիտարկում էին ոչ միայն որպես Հայոց եկեղեցու հետևորդների հոգևոր առաջնորդ, որն ուներ իրեն ենթակա հոգևորականներին նշանակելու և աստիճանագրելու, եկեղեցական գույքն ու սեփականությունը տնօրինելու իրավունք, այլև նրան էր վերապահված նաև որոշ առումներով հայության աշխարհիկ ղեկավարի դերը: Նա էր իրականացնում իր հոտի քրիստոնյա հավատքին համապատասխան ներքին կառավարումը, կրոնական և որոշ քաղաքացիական ներքին խնդիրների կարգավորումը: Միաժամանակ, թե՛ հայոց կաթողիկոսները, թե՛ հայոց վանքերի առաջնորդները, ելնելով Հայոց եկեղեցու շահերից, դառնում էին հայ ժողովրդի իրավունքների ու շահերի պաշտպանը մահմեդական տիրապետության պայմաններում:

Հայոց եկեղեցու առաջնորդների դիրքը և տիտղոսը պարսկական տիրապետության ներքո

Հայոց կաթողիկոսներին և եպիսկոպոսներին իրանական իշխանությունները մեծարում էին «խալիֆա» տիտղոսով, որը ծագում է արաբական «խալիֆ», «փոխանորդ», «տեղապահ» բառերից: Այդ տիտղոսն առաջ է եկել Մուհամմադ մարգարեի մահից հետո՝ անվանելու համար նրա հաջորդների իշխանության իրավական կարգավիճակը՝ որպես նախ «Աստծո առաքյալի փոխանորդի», ապա նաև՝ «Աստծո փոխանորդի»: Դեռևս XIII դարից «խալիֆա» անվանումը օգտագործվում էր Հռոմկլայում նստող Ամենայն հայոց կաթողիկոսի ու խոշոր վանքերի առաջնորդների վերաբերությամբ արաբական աղբյուրներում՝ նկատի առնելով նրա՝ «Աստծո փոխանորդ» կամ «Քրիստոսի փոխանորդ» լինելու հանգամանքը¹: Կարծում ենք՝ այս տիտղոսի կիրառումը հայոց կաթողիկոսների վերաբերությամբ նաև հետագա պարսկական վավերագրերում և այլ աղբյուրներում², որը, ի դեպ, չի կիրառվել վրաց կաթողիկոսների վերաբերությամբ, մատնանշում է հայոց հոգևոր առաջնորդներին տրված որոշ ինքնուրույնությունը իրանական գերիշխանության ներքո:

Հայոց եկեղեցու և նրա հոգևոր առաջնորդների դիրքը պահպանվում է Նադիր շահի 1747 թ. մահից հետո Կովկասում ձևավորված իրանական տիպի պետականության առանձնահատկությունները կրող կիսանկախ Երևանի խանությունում: XVIII դարի երկրորդ կեսի Ամենայն հայոց կաթողիկոսներին հաջողվում է ոչ միայն խանական և շահական հրովարտակներով ամրագրել նախորդ իրանական իշխանություններից ստացած իրավունքներն ու արտոնությունները, այլև դրանք ձևակերպել մեկ ընդհանուր հրովարտակով, որտեղ դրանք թվարկվում և վերահաստատվում են 13 կետով:

Ներկայացվող պարսկերեն վավերագիրը՝ որպես Հայոց եկեղեցու իրավունքները ամրագրող փաստաթուղթ

Հոդվածում ներկայացվող փաստաթուղթը ստեղծվում է Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցու նախաձեռնությամբ, նրա խնդրագրի հիման վրա, որը ներկայացվում է Երևանի Հուսեյն Ալի խանին և 1760 թ. հաստատվում նրա հրովարտակով: Հուսեյն Ալին Երևանի խանն է եղել 1759-1783 թթ.³:

Երեք տարի անց Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ջանքերով իր կաթողիկոսական իրավունքները հաստատող Քերիմ խան Ջենդի հրովարտակով վերահաստատվում են նաև Հայոց եկեղեցու և հայության վերոհիշյալ իրավունքները⁴, որոնցում միայն մեկ կետ է ավելացվում՝ Հայոց եկեղեցու ապա

¹ Դանիելյան 2016, 218:

² Կաթողիկոսների այս տիտղոսի և պատվանունների մասին տե՛ս Կոստիկյան 2019, 121-133:

³ Հակոբյան 2021, 38:

⁴ Այդ հրովարտակի պատճենն է պահպանվել, տե՛ս Կոստիկյան 2008, վավ. 49:

հարկության, նաև մի քանի այլ արտակարգ հարկերից ազատելու վերաբերյալ:

Հետագայում այս փաստաթղթերը հիմք են դառնում նաև դաջարական իշխանությունների կողմից Ամենայն հայոց կաթողիկոսի դիրքի և իրավունքների մեկ առ մեկ հստակ ձևակերպմամբ Ֆաթհալի շահի և Ատրպատականի փոխարքա թագաժառանգ Աբբաս Միրզայի կողմից Դավիթ և Եփրեմ կաթողիկոսներին տրված հրովարտականների հրապարակման համար⁵: Դրանցում նշվում են Մայր Աթոռի և՛ տնտեսական իրավունքները իր կալվածքների ու սեփականության նկատմամբ, և՛ որոշակի հարկերից ու տուրքերից ազատվածությունը, նրա սպասավորների և ուխտագնացների առանց մաքսատուրքերի երթևեկության իրավունքները, և կաթողիկոսի ինքնուրույնությունը իր ենթակաների և բարձրաստիճան հոգևորականների նշանակման ու պաշտոնազրկման հարցում, նաև հայության ներհամայնքային խնդիրները կարգավորելու և կրոնական օրենքները գործադրելու բացառիկ իրավունքը: Միաժամանակ արգելվում էին յուրաքանչյուր ոտնձգություն վանական կալվածքների նկատմամբ, հայերին իսլամ ընդունելու պարտադրանքը և կրոնական արարողությունների անցկացումը որևէ կերպ խոչընդոտելը:

Հակոբ Շամախեցին, որը Ամենայն հայոց կաթողիկոսն էր 1759-1763 թթ., բավականին լավ տիրապետում էր պարսկերենին⁶, և, ըստ ամենայնի, նա ինքն է շարադրել խնդրագրի մասը՝ հենվելով ձեռքի տակ եղած հրովարտականների վրա: Այս առթիվ տեղին է հիշել Սիմեոն Երևանցու այս կաթողիկոսին տված բնութագիրը. «...կազմում էր (փաստաթղթերի) սեւագիր (օրինակները) եւ հանձնում գրագիրներին, որոնք եւ մաքրագրում էին... տեղյակ էր արքունական եւ իրավական օրենքներին... սա էր գրում եւ հոգ տանում արքունական եւ իրավական փաստաթղթերի մասին»⁷, որոնք, բնականաբար, պարսկերեն էին:

Խնդրագրի մասում ամփոփ ներկայացված հրովարտականների բնօրինակները պահպանվել են Մատենադարանի կաթողիկոսական դիվանում և հրատարակվել «Մատենադարանի պարսկերեն վավերագրերի» շարքի հատորներում: Խանական հրովարտակը կարևորվում է նրանով, որ մեկ փաստաթղթում առաջին անգամ ամփոփված են Մայր Աթոռ Սրբ Էջմիածնի, Հայոց եկեղեցու և իրանահպատակ հայության հիմնարար իրավունքները, նաև արտոնությունները, որոնք նրանց տրված են եղել իրանական, ապա նաև խանական իշխանության ներքո: Այս փաստաթղթի բնօրինակը ներկայումս պահվում է Մայր Աթոռ Սրբ Էջմիածնի արխիվում (գույքահամար 398), իսկ

⁵ Այս հրովարտականները տե՛ս հրատարակված Կոստիկյան 2021, վավ. 8, 13, 31:

⁶ Օրմանյան 2001, սյ. 3475:

⁷ Սիմեոն Երեւանցի 2003, 46:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի կաթողիկոսական դիվանում առկա է պատճենը⁸:

Վավերագրի նկարագրությունը

Մայր Աթոռ Սրբ Էջմիածին, արխիվ, պարսկ. վավերագիր հ. 389, մեծ. 47,5x67սմ, բնագիր: Խնդրագրի և հրամանագրի մասերը տարբեր անձանց ձեռքով են գրված. խնդրագիրը գրված է շիքասթե-նասթա՛լիլ գրով, հրամանագրի մասը՝ նասթա՛լիլով, որին խառնված են շիքասթե և ռիկա գրերի տարրեր: Վավերագիրն ունի ծաղկային լուսանցազարդեր, որոնցում առկա են հայկական մանրանկարչությանը բնորոշ զարդանախշեր:

Կան ուղղագրական սխալներ խնդրագրի մասում, որոնք պարսկերեն բնագրում ներկայացված են անփոփոխ (هيه/حبه، اورا/آترآ، ملكاته/مالكانه، خيشان/خويشان):

Բազմաթիվ են բառերի կրկնակի հոգնակի ձևերը مراتبها، مقاصدها، حكامان، عمالان، جوانبها، ايامها، اجناسها، اشياها، خدمها և այլն:

Բնագրին հարազատ մնալու մտայնությամբ և հրովարտակի լեզվաոճական առանձնահատկությունները պահպանելու նպատակով որոշ եզրույթներ և անվանումներ ներկայացրել ենք այնպես, ինչպես դրանք նշված են բնագրում (ինչպես, օրինակ, խալիֆա, Ուլքիլիսա (Էջմիածին)) և հարկ եղած դեպքում բացատրել ենք ծանոթագրությամբ:

Թարգմանություն

Բարձր հրաման եղավ, որ ինչպես, որ օրերս խնդրարկուն ստորև շարադրանքով նախկին միապետների գերագույն ռաղամների բովանդակությունը [Էջմիածնի] մուաֆության⁹, վակֆերի¹⁰, [նրան] վերաբերող պարտավորությունների մասին և քրիստոնյաների կրոնի ու հավատքի կարգով մանրակրկիտ զեկուցել ու խնդրել էր, մահմեդական և զիմմի¹¹ ժողովրդից ոչ ոք ոչ մի դեպքում հայերի համայնքի քրիստոնեական օրենքի գործերի, նրա վակֆերի, մուաֆ արված գումարների ու նաև այլ պատճառներով Ուլքիլիսային,

⁸ ՄՄ, կ/դ, թղթ. 1գ, վավ. 428:

⁹ Մու՛աֆ (موقف) - հարկային իմունիտետ, ազատում բոլոր տեսակի պետական հարկերից, երբեմն նաև միայն որոշ հարկերից և պարտավորություններից: Համանիշ՝ «մուսալլամ, թարխան» (Փափազյան 1956, 114):

¹⁰ Վակֆ (وقف) - բառացի նշանակում է «կանգ առնել», «ամրանալ»: Այսպես էին կոչվում եկեղեցիներին կամ մզկիթներին նվիրված, վակֆ արված հողերն ու այլ ստացվածքները, որովհետև, նվիրվելով որևէ կրոնական հաստատության, դրանք այլևս ենթակա չէին ոչ մի կարգի օտարման և մնում էին որպես եկեղեցու կամ մզկիթի մշտական սեփականություն և, որպես այդպիսիք, ազատվում էին պետական հարկերից (Փափազյան 1956, 120):

¹¹ Զիմմի (ذممي) - այդպես էին կոչվում քրիստոնյա և հրեա հպատակները, որոնք, ի տարբերություն մուսուլման հպատակների, բոլոր հարկերից ու պարտավորություններից բացի, պարտավոր էին վճարել նաև հատուկ գլխահարկ՝ «ջիզյա», որով իրավունք էին ստանում իրենց կրոնը դավանելու (Փափազյան 1956, 108):

նրա սպասավորներին ու վանականներին նեղություն և անհանգստություն չպատճառի: Դրախտաբնակ տիրակալի և հանգուցյալ սուլթանների հրամանագրերով ամրագրված թույլատրելի ու անթույլատրելի կետերը հաշվի առնելով՝ կարգադրված պետք է համարեն, որ *ամիրները*¹², *վակիֆների*¹³ ժառանգները, *շեյխ ուլ-իսլամը*¹⁴, *ղազին*¹⁵ Ուլքիլիսայի վանքի սևագլուխների ու սպասավորների հետ հարաբերվելիս որևէ միջամտություն ու ոտնձգություն հիշյալ վանքի *վակֆերի*, *մուաֆուջան*, կրոնի և քրիստոնյա ժողովրդի նկատմամբ չպետք է կատարեն: Այս պետք է խիստ հրաման և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1173 թ. շա'բան ամսի 4-ին¹⁶: [Կնիք]. /// Հուսեյն Ալի:

Ուլքիլիսայի Ակոբ խալիֆայի խնդրագիրը

Գերագույն, Իսքանդարի փառքին արժանի Նորին բարձրաստիճան Մեծության փառապանծ վեքիլներին¹⁷ է հասցնում այն, ինչ Նորին պաշտելի Մեծության ծառաներին հայտնի է. դա հետևյալն է, որ Ուլքիլիսայի նախկին օրինավոր խալիֆաները որոշ հարցերի ու նպատակների կարգավորման համար անցյալի դրախտաբնակ աշխարհակալ տիրակալների, մեծ *բեկլար-բեկերի*¹⁸, գթասիրտ *հաքիմների*¹⁹, *ամիրների* ու *զաքիթների*²⁰, Աստված ողորմի նրանց, շեմքին դիմած ու խնդրած լինելով՝ հիշյալ ողորմած [տիրակալ]ները, Բարձրյալ Տիրոջ Քրիստոնեական արդար իրավունքը առանձնացնելով, հանուն Աստծո և այս օջախի²¹ համար նրանց խնդրագրերով ներկայացված հետևյալ խնդիրների ու կետերի շուրջ պարտադիր հպատակություն պա-

¹² Ամիր (أمير) - այն պաշտոնյաներն էին, որոնք հաշվառման էին ենթարկում բոլոր հարկատու օբյեկտները, չափում ցանքերն ու այգիները, ցուցակագրում բոլոր չափահաս աշխատունակ մարդկանց և ըստ այնմ որոշում, թե տվյալ օբյեկտից որքան հարկ պետք է գանձվի:

¹³ Վակիֆ (واقف) - վակֆ անող, եկեղեցուն կամ մզկիթին, որևէ բան, հարստություն, հող կամ կալված նվիրող:

¹⁴ Շեյխ-ուլ-իսլամ (شيخ الإسلام) - այսպես էր կոչվում տվյալ վայրի մուսուլմանների գլխավոր կրոնապետը: Յուրաքանչյուր խոշոր նահանգական-վարչական կենտրոն ուներ իր «շեյխ-ուլ-իսլամը», որը գլխավորում էր «շար'ի» հոգևոր դատական խորհուրդը: Խորհուրդում քննվող զանազան հարցերի մասին շեյխ-ուլ-իսլամները տալիս էին վճիռներ՝ «ֆաթվաներ», որոնք օրենքի ուժ ունեին և ենթակա էին գործադրման տվյալ նահանգի կամ շրջանի սահմաններում (Փափագյան 1959, 227):

¹⁵ Ղազի (قاضي) - դատավոր, շար'ի դատական ատյանի պետը, որը նշանակվում էր բարձրաստիճան հոգևորականության շարքերից, որը շարիաթի օրենքով քննում էր քաղաքացիական ու քրեական գործերը (Փափագյան 1959, 222):

¹⁶ 1760 թ. մարտի 10:

¹⁷ Վեքիլ (وکیل) - լիազոր անձ:

¹⁸ Բեկլարբեկ, ճիշտ ձևը բեկլարբեկի (بیکلار بیک) - Սեֆյան Իրանի սահմանամերձ նահանգներում կամ կուսակալություններում իշխող խաներն ու ամիրները կոչվում էին «բեկլարբեկեր»:

¹⁹ Հաքիմ (حاكم) - գավառապետ, քաղաքացիական դատավոր (Փափագյան 1956, 111):

²⁰ Զաքիթ (ضابط) - գրավող, բռնագրավող: XVII-XVIII դարերում *զաքիթ* էին կոչվում նաև պետական հարկերի վարձակալները, որոնք, նախապես որոշ գումար մուծելով պետական գանձարան, իրավունք էին ստանում տվյալ օբյեկտի հարկերը գանձելու (Փափագյան 1959, 215):

²¹ Պարսկերեն վավերագրերում օջախ բառով է մատնանշվում Մայր Աթոռ Սրբ Էջմիածինը:

հանջող օրինյալ, պարտադիր հպատակություն պահանջող հրամանագրեր էին շնորհել.

Կետ առաջին. Ուչքիլիսայի խալիֆաներին, քահանաներին, սևագլուխներին, գործավորներին ու սպասավորներին վանքի գործերի կապակցությամբ մուաֆույթուն են շնորհել մալոջհաթից²², վջուհաթից²³, ավարիզաթից²⁴ և այլ պարտավորություններից ու տուրքերից: Ոչ ոք չպետք է նրանց անհանգստացնի և նրանցից որևէ հատիկ կամ դինար պահանջի: Ինչքան էլ նրանք ցորեն, բրինձ և այլ հացահատիկ ցանեն ու մշակեն, որևէ մեկն իրավունք չունի այն չափելու ու յուրացնելու, որովհետև արգելված է:

Կետ երկրորդ. ով էլ մահմեդականներից, զիմմիներից և այլ [անձանց]ից, Ուչքիլիսայի մուլքում²⁵ ու գյուղերում վարուցանք անի, մալեքանեն²⁶ պետք է վճարի: Կարգադրված է:

Կետ երրորդ. պարտադիր հպատակություն պահանջող հրամանագրերով կարգադրված է, որ ով Ուչքիլիսայի գանձագին և վակֆ արված մուլքերի, մասնավորապես այգիների, ցանքատարածությունների, կաշեգործական, ձիթհան, բամբակահան, բրնձի ու հացահատիկի մաքրման գործատների, ջրաղացների և այլնի նկատմամբ ոտնձգություն և յուրացում կատարած լինի, պետք է վերադարձնի, որովհետև արգելված է:

Կետ չորրորդ. պարտադիր հպատակություն պահանջող հրամանագրերով կարգադրված է նաև, որ, հին կարգի համաձայն, ոչ ոք չպետք է արգելի Ուչքիլիսայի ու վանքերի, գյուղեր[ում եկեղեցիների]ի ու մենաստանների զանգերը և կոչնակ հնչեցնելը, մահացածներին հայերի օրենքներով տանելը: Կարգադրված է:

²² Մալոջհաթ (مالو جهات) - եզրույթը կազմված է «մալ» (ապրանք, հարստություն) և «ջահաթ» (կողմեր, վայրեր, վարելահողեր) բառերից: «Մալը» սեփականության հարկն էր, իսկ «ջահաթը» գյուղի վարելահողերից գանձվող հողային հարկը: Այս երկու հարկերը միշտ միատեղ էին հաշվվում և ընդհանուր գումարով գանձվում գյուղական համայնքից: Մալոջհաթը բնակչությունից գանձվող ռենտա-հարկի մեծ մասն էր կազմում և, մի անգամ որոշված լինելով անխախտ չափերով, գանձվում էր ռայաթներից: Դրա համար էլ շատ հաճախ այս անվան տակ հասկանում էին տվյալ օբյեկտից գանձվող նաև այլ հարկերը, այս դեպքում «մալոջհաթ» եզրույթը դիտվում էր որպես հավաքական հարկային եզրույթ (Փափագյան 1956, 112):

²³ Վջուհաթ - وجوهات - «վաջի - وجة» (զումար) բառի կրկնակի հոգնակի ձևն է (وجوه وجوهات): Այս անվան տակ հասկացվում էին առհասարակ այն բոլոր հարկերը, որոնք գանձվում էին կանխիկ դրամով: Աղբյուրներում հանդիպում է նաև «թավաջջուհաթ - توججهات», «մութավաջջեհաթ - متوججهات» ձևերով (Փափագյան 1956, 121):

²⁴ Ավարիզաթ (اورضات) եզրույթի տակ հասկացվում էր ռայաթների պարտադիր աշխատանքը զանազան արտակարգ պատահարների ժամանակ: Այս պարտավորությունը ևս շատ հաճախ փոխարինվում էր դրամական տուրքով (Փափագյան 1956, 105):

²⁵ Մուլք (ملك) - սեփականություն, տիրույթ, ժառանգաբար ստացած կամ դրամով գնած ու սեփականություն դարձրած հող կամ այլ անշարժ կալված (Փափագյան 1956, 115):

²⁶ Մալիքանեն (مالكانه) - կալվածատիրոջ կամ մալիքին վճարվող հողային ռենտա: Համանիշներ «բաիրաշեն», «մուլք» (Փափագյան 1956, 112):

Կետ հինգերորդ. պարտադիր հպատակություն պահանջող հրամանագրերով կարգադրված է նաև, որ Ուլքիլիսայի խալիֆայի, քահանաների ու սևագլուխների, եկեղեցիների ու վանքերի գործերին ըստ ավանդական կարգի շեյխ-ուլ-խսամները, ղազիները, ամիրները և այլ մահմեդականները, մելիքները, քալանթարները²⁷ և հայերից ոչ ոք չպետք է միջամտեն ու մասնակից լինեն:

Կետ վեցերորդ. որոշ անձինք սրանից առաջ խառնակ ժամանակներում իրենց իրերը և գույքը բերել Ուլքիլիսայում են թողել, հետո մի մասը տարել, մի մասը այս ընթացքում ոչնչացել է, մի մասն էլ հաքիմներն են յուրացրել, այժմ իրենք ու դրանց տերերի ժառանգները եկել շիյթադ²⁸ են անում: Չպետք է այդպես վարվեն, որովհետև արգելված է:

Կետ յոթերորդ. պարտադիր հպատակություն պահանջող հրամանագրերով կարգադրված է, որ Ուլքիլիսայի որոշ գանձագին և վակֆային մուլքերը, որ գնվել են քահանաներից, որոնք մահացել են, նրանց ազգականներից ու ժառանգներից ոմանք եկել, Ուլքիլիսայի հոգևորականների ու սպասավորների հետ անօրինական վիճաբանությունների մեջ են մտել, որոնց խոսքը օրինյալ բարձր հրամանագրերով անհիմն է: Կարգադրված է:

Կետ ութերորդ. պարտադիր հպատակություն պահանջող հրամանագրերով կարգադրված է, որ հայ ժողովրդին մահմեդականները չպետք է բռնի մահմեդականացնեն, որովհետև արգելված է:

Կետ իններորդ. պարտադիր հպատակություն պահանջող հրամանագրերով կարգադրված է, որ մահմեդական համայնքից ով, որ սրանից առաջ Ուլքիլիսայի հայերից պարտք է վերցրել, ծանուցմամբ պետք է իր պարտքը վերադարձնի: Կարգադրված է:

Կետ տասներորդ. պարտադիր հպատակություն պահանջող օրինյալ հրամանագրերով կարգադրված է, որ երբ Ուլքիլիսայի սևագլուխները, գործավորներն ու սպասավորները զաքյաթ²⁹ և նվիրատվություն հավաքելու նպատակով տարբեր կողմեր են գնում, նաև, երբ հեռավոր վայրերից Ուլքիլիսա ուխտագնացության են գալիս, սևագլուխներից և վանքի մյուս սպասավորներից և Ռումի (Օսմանյան կայսրության), Իրանի ու մնացած հեռու վայրերից ուխտագնացության եկող-գնացողներից, որոնք վաճառականական ապ-

²⁷ Քալանթար (کلاتر) էին կոչվում քաղաքների կամ քաղաքային խոշոր թաղամասերի աշխարհիկ ղեկավարները, որոնք զբաղվում էին բնակչության քաղաքացիական հարցերով և հետևում քաղաքի հասարակական գործերին: Սրանք սովորաբար ընտրվում էին քաղաքի մեծահարուստ վաճառականների կամ խոջաների շարքերից (Փափազյան 1956, 122):

²⁸ Շիյթադ, շիյթադյաթ (شيعتي، شيعيات) - տարբեր պատրվակներով անօրինական հարկ, հավելագանձում, կրկնակի, եռակի հարկագանձում, անօրինականություն, կողոպուտ (Margaryan 2022, 22-27):

²⁹ Զաքյաթ (زكاة) - եկամտի 1/40-ի չափով եկեղեցուն կամ մզկիթին վճարվող տուրք. հայերեն՝ «քառասնից» (Փափազյան 1959, 216):

րանք իրենց հետ չունեն, նվեր հանդիսացող իրերի համար *ռահդարի*³⁰ չպահանջեն, և ոչ ոք նրանց նեղություն չպատճառի, որովհետև արգելված է³¹:

Կետ տասնմեկերորդ. պարտադիր հպատակություն պահանջող օրինյալ հրամանագրով կարգադրված է, որ *չափարները*³² Ուչքիլիսայի օջախից, վանականներից, սևագլուխներից, [նրանց] ուսանողներից ու սպասավորներից ձի չվերցնեն հեծնելու համար և այլ *շիլթաղ* չանեն³³: Արգելված է:

Կետ տասներկուերորդ. պարտադիր հպատակություն պահանջող օրինյալ հրամանագրով կարգադրված է, որ Կարբի՝ Օշական (Քասախ) գետի ջրի կեսը հին ժամանակներից, պապենական կարգով, Ուչքիլիսայի օջախի բաժինն է և նրան է պատկանում: Կարգադրված է:

Կետ տասներեքերորդ. պարտադիր հպատակություն պահանջող օրինյալ հրամանագրով կարգադրված է, որ Ուչքիլիսայի *մուլքերում*, լինի դա այգի կամ այլ [սեփականություն], մահմեդականներից ու հայերից ոչ ոք վարուցանք չանի, որովհետև արգելված է:

Հիշյալ օջախում առկա այս պարտադիր հպատակություն պահանջող հրամանագրերով և դրախտաբնակ [տիրակալների] ջանքերի շնորհիվ մինչ այժմ այս օջախը շեն է մնացել, Ձեր ծառաները գիշեր-ցերեկ առանց թերանալու աղոթում են հանգուցյալ տիրակալների հաղթական պետության հարատևման համար, և Բարձրյալ Տիրոջ կամքով այսուհետև ևս հատկացված կյանքից որքան էլ ապրենք, դրախտաբնակների համար առանց ափսոսելու, անթերի կերպով շարունակելու ենք աղոթել: Փառք Ալլահին ու իմամներին, որ այս օջախը սկզբից մինչև վերջ Նորին Մեծություն իմ տիրոջ ուղեկցությամբ այս նպատակի իրագործմամբ, ամենանվաստս կպատվեք: Խնդրանքն այն է, որ Նորին Մեծություն պաշտելի և մեծահոգի տիրոջ *վեքիլները*, իրենց սիրելի, օրինյալ Տիրոջ ողորմածությանը արժանացնելով՝ նվաստիս այս խնդրագրին համապատասխան հրովարտակ կիրապարակեն և նրա օրինյալ անունը կմտցնեն այս օջախի բարի օրինանքները [վայելողների] մեջ, որը նվաստներիս համար պատիվ է, և դա Ալլահն ու Նրա մարգարեն անտես չեն առնի:

Համարձակվեցի դիմել, որովհետև անհրաժեշտ էր, մնացածը Ձեր բարձր հրամանով:

³⁰ Ռահդարի (راهداری) - մաքսային հարկ:

³¹ Այս կետի մեկնաբանությունը տե՛ս Կոստիկյան 2018, 80:

³² Սուրհանդակ: Չափարի ձին հարկատեսակ էր, որը գանձվում էր ձիով՝ *չափարի* կամ սուրհանդակների կողմից: Այն ի հայտ էր եկել Իրանում ու տարածաշրջանում XVIII դ. փոստային ծառայության խաթարման հետևանքով և իշխանությունների թողտվությամբ՝ փոստային կապը իրականացնելու նպատակով:

³³ Այս կետի մեկնաբանությունը մանրամասն տե՛ս Կոստիկյան 2018, 84-85:

حکم عالی شد آنکه چون درینوقت بنحویکه صاحببرضه در شرح متن بمدلول و مضمون ارقام مطاعه یادشاهان سلف در باب معافی و موقوفات و تکالیفات بالانتعاق و آیین دین و مذهب مسیحیان مفصل و مشروح عرض و استدعا نموده اند که بهیچ وجه من الوجوه احدی از طایفه اسلامی و ذمی بامور شرعیه جماعت ارامنه که موافق دین و مذهب ایین عیسویه است مقر موقوفات و وجوه معافی و غیره جهات متعرض و مزاحم معبد اوج کلیسیا و خادمان و علفان ان نشوند نظر بقیود اوامر و مناهای ارقام خاقان رضوان مکن و سلاطین علین اشین مقرر داشته که عمال و اهالی و اهقیان و شیخ الاسلام و قاضی با سیاه کلاهان و خادمان معبد اوج کلیسیا سلوک مسلوک داشته هیچ گونه دخل و تصرف موقوفات و معافی و دین و مذهب معبد مزبوره و جماعه مسیحیان ننمایند که بازخواست عظیم و سیاست فخیم خواهد گردید و درین باب قدغن لازم دانسته و در عهده شنسند تحریر افی 4 شهر شعبان المعظم سنه 1173 [مهر]: /// حسین علی

عرضه داشت کمترین بندگان اکوب خلیفه اوج کلیسا بنزوه عرض وکلاء اجلاء نواب مستطاب معلی القاب سکندرستان عالی مراتب که بر بندگان نواب قبله گاهی ام ظاهر و هویدا است که تبت خلفهای سابق اوج کلیسا که در خصوص بعضی مراتبهای و مقاصدهای امرونی بخلکوی عالم آرای رضوان مکانان سلاطین علین اشیان یادشاهان قدیمی و یگزیبگیان عظام حکامان کرام و عمالان و ضابطان ماضی رحمهم الله تعالی عرض و استدعا نموده بودند فردوس مکانان و معظم الیهمان رضای حق سنی بها الله تعالی را در میانه مغرور داشته حسینالله از برای خاطر این اوجاق ارقامهای مبارک مطاع لازم الاطاعه در باب مطالبات و مقاصدات حسب الخواص مراتب معروضه ایشان بموجب نزل احسان و شفقت و عنایت و مرحمت فرموده بودند برینموجب است:

34 مفصل اول در باب امور معبد خلفهای اوج کلیسا و محارسان و سیاه کلاهان و عمله و خدمه اوج کلیسا معافی مقرر داشته اند از بابت ملوجهات و وجوهات و عوارضات و تکالیفات و غیره جهات احدی متعرض احوال ایشان نگردیده هیه 35 و دیناری از مشار الیهمان مطالبه نه نمایند و رنجیده نسازند و مومی الیهمان هرچه از غله و شلتوک و غیره کشت و زراعت می نمایند منتقصی اورا 36 نه پیموده دخل و تصرف نه نماید که نهی است.

مفصل ثانی هرکس از اسلام و نمی و غیره در ملک اوجاق اوج کلیسا و در دهات کلیسا مزبور کشت و زراعت نماید ملکه 37 را کارسازی نماید امر است.

مفصل ثالث اینکه بموجب ارقامهای لازم الاطاعه مقرر گردیده به املاک زرخریده و وقف شده اوج کلیسا در خصوص جای باغات دباغیها و طاهونها و دینک و کرکره و جای زراعت و بزرخه و غیره هرکس بخلاف حساب ضبط و تصرف کرده باشد باز دهد که منهی است.

مفصل اربعه بموجب رقمهای مطاع لازم الاطاعه نیز مقرر است از ناغوس کشیدن و تخته زدن و بانک گفتن و مرده برداشتن به آیین ارامنه اوج کلیسا و وانکها و قریها و آدابها بقانون قدیم کسی مانع نشود امر است.

مفصل خمس بموجب ارقامهای لازم الاطاعه مقرر است که در باب امور معبد خلیفه اوج کلیسا و محارسان و سیاه کلاهان و کشتیان کلیساها و وانکها بقانون ایین شیخ الاسلامین 38 و قاضیان و عمالان و غیره مسلمانان و ملکان و کلانتران و صوم ارامنه دخلی و رجوعی نباشند که منهی است.

مفصل سته بعضی کسان قبل ازین در ایامهای شورش و اختلال اشتباها و اجنلسها آورده با اوج کلیسا نهاده اند باز بعضی اشتباها را خودها برده اند و برخی را هم در میانه برطرف نموده اند و بعضی را نیز حاکمان کشیده برده اند حال خودهای وارتان صاحب مال آمده شلتقها می نمایند چنین نحوی شلتاق ننمایند نهی است.

مفصل سبعة بموجب ارقامهای لازم الاطاعه مقرر است املاک زرخریده را و ملک موقوفه اوج کلیسا از محارسان بیع آورده ابتیاع نموده بودند بخدا خود فوت شده و بعضی کسان از خیشان 39 و اقربایان و وارتان آمده از محارسان و خدمه اوج کلیسا بخلاف شرعی ادعا مینمایند برطبق رقمهای مبارک مطاع حرف ایشان باطل خواهد شد امر است.

مفصل ثمانية بموجب ارقام مبارک مطاعه نیز مقرر است ملت ارامنه را طایفه مسلمان جبرا و قهرا" مسلمان نگند که نهی است.

مفصل تسعة نیز بموجب ارقام مطاعه مقرر است هر کس قبل ازین جماعة اسلامی از طایفه ارامنه اوج کلیسا قرض گرفته اند از قرار خاطرنشان قرض خود را ادا نمایند امر است.

مفصل عشر یطبق رقمهای مبارک مطاع لازم الاطاعه مقرر است چون سیاه کلاهان و عمله و ختمه معبد اوج کلیسا بجهة جمع آوری زکات و بردن هدیه بآنطرف و جوائنها می روند و از ولایت بعیده نیز مردم بجهة زیارت معبد مزبور اوج کلیسا می آیند از سیاه کلاهان و عمله و خدمه اوج کلیسا و کسانی از ولایت روم و ایران و باقی از ولایت بعیده بعنوان زیارت بمعبد خود آیند و روند می کنند مال تجارت و فروختنی در میان ایشان همراه نه داشته باشند بعلت مال سوقات راهداری مطلبه نه نمایند احدی بیچ وجه من الوجوه متعرض احوال آنها نگردد که نهی است.

مفصل احد عشر اینست که بموجب رقم مبارک مطاع چارار 40 از اوجاق اوج کلیسا و محارسان و از سیاه کلاهان و از شاگردان و از خدمه اسب گرفته سوار نباشند و شتاقها دیگر نه نمایند نهی است

مفصل اثنی عشر بموجب رقم مبارک مطاع مقرر است آب رودخانه کربی و اشکن از ابابو عنجد از قدیم الایام نصف حصه آب مزبور متقی 41 اوجاق اوج کلیسا است و دامن اوج کلیسا بوده است امر است.

مفصل ثلث عشر بموجب رقم مبارک مطاع نیز مقرر است در املاک اوج کلیسا خواه جای باغ باشد و یا غیره از اسلام و ارامنه کسی کشت و زراعت نه نماید که نهی است

بیضه

بهذا ارقامهای مطاعه لازم الاطاعه در اوجاق مذکور موجود است از عین همت غفران یناهان و رضوان مکانان تا حال این اوجاق آباد مانده است لیل و نهار 42 این کمترین بدعاگویی دوام دولت قاهره ایدی مدت فردوس مکانان سلطین علین آشیان

استقال 43 گردیده دریغ نه نموده ایم انشاء الله تعالی من بعد الیوم چه قدر عمر مستفاد کمترینان نیز باقی است در باره فردوس مکانان دریغ و تقصیری نخواهد گشت الھی الحمد و ائمه این اوجاق و این کمترینان از اول تا باخر به ترفیق بروکلاء نواب صاحبی ام است نحوی مقصد کمترینان ایام مبارک بندگان نواب مستطاب علی رسیده باعث سرافرازی کمترینان گردیداستدعا آنکه وکلا نواب مستطاب قبله گاهی ام دولتمند و صاحب مروت است بصدقه فرق مبارک عزیز خود تصدق داشته در باب امر و نهی که بموجب ارقامهای فردوس مکانان در باب مسطور است از انقرار و در آفتوال که عریضه کمترین را حکم مقرر فرموده

نام مبارک خود را بدعای خیر این اوجاق دخیل و حاضر سازند که باعث سرافرازی کمترینان خواهد گشت که عند الله و عند رسول الله ضایع نخواهد شد. چون واجب دید بجزعت و جسارت عرض نمود. مافی امره العالی.

Վավերագրի բովանդակային վերլուծությունը

Խնդրագրում ներկայացված իրավունքի կետերից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը, որը երբեմն բավական մանրամասն հետազոտված է և մեկնաբանված:

Մայր Աթոռ Սրբ Էջմիածնի իրավաքաղաքական պաշտպանվածության հարցում մեծ դեր էր խաղում նրա տնտեսական կարողությունը. ուստի պատահական չէ, որ առաջին երեք, ապա իններորդ, տասներկուերորդ և տասներեքերորդ կետերը վերաբերում են նրա տնտեսական կարողությունների, ապահարկության պաշտպանությանն ու ամրապնդմանը: Այդ կարողության հիմքում նրա կալվածքները, դրանցից ստացվող հարկերն ու եկամուտները, հարկային արտոնությունները և նրա սպասավորների կողմից հայության տարբեր հաստիքներից եկեղեցական տուրքերի ու նվիրատվությունների անարգել ու առանց հարկերի հավաքումն էր Էջմիածնում, նաև պաշտպանությունը զանազան ոսնձգություններից, որն անհրաժեշտ էր մահմեդական իշխանությունների հետ հարաբերություններում և հայ ժողովրդի կյանքում ծագող զանազան խնդիրների հաղթահարման համար: Այս հարցերին մենք մանրակրկիտ անդրադարձել ենք առանձին հոդվածում, որ

նվիրված է Հայոց եկեղեցու իրավական ու սոցիալ-տնտեսական դրությանը³⁴, ուստի այստեղ անհրաժեշտ չենք համարում նորից արծարծել: Ստորև կանդրադառնանք միայն այն հարցերին, որոնք այդ հոդվածում չենք քննել և որոշ պարզաբանման կարիք ունեն:

Պաշտոնապես Սեֆյան Իրանում XVII-XVIII դարերում հայ *զհմմիներին* կրոնական ծեսերի ու արարողությունների կատարման հարցում տրված էր լիակատար ազատություն, որի մասին հավաստում է Առաքել Դավրիժեցին. «...զամենայն կարգ և զաւանդութիւնս քրիստոնէական համարձակութեամբ կատարէին քրիստոնեայքն. զկոչնակ հարկանել, զժամ կանչել. և զգործինէքն մեծախումբ հանդիսի առնել... Եւ զմեռեալսն խաչալամով և ծայնի շարականաւ հանեալ ի քաղաքէն անցուցանէին ընդ մէջ շուկային՝ և տանէին ի թաղել»³⁵: Եվրոպացի ուղեգիրները, ականատես լինելով իրանահպատակ հայության կրոնական արարողությունների ազատ կատարմանը, փաստում են դրանց նկատմամբ իրանցի իշխանավորների հետաքրքրության ու անգամ շահի ներկա լինելու մասին³⁶:

Կրոնական ծեսերի ու արարողությունների ազատ կատարման իրավունքը Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի ջանքերով ամրագրվել էին Սեֆյան շահ Սուլեյմանի 1669 թ. հրամանագրերով³⁷:

Հայության քրիստոնեական օրենքներով ապրելու իրավունքը պաշտպանելու համար 1669 թ. շահ Սուլեյմանից հրամանագիր էր ձեռք բերել նաև Աղվանից Պետրոս կաթողիկոսը³⁸: Իրանի հոգևորականության բարձրագույն ատյանի կայացրած վճիռները արգելում էին նաև տարբեր շրջաններում բնակվող հայ *զհմմիներից* իրենց իրավունքներին համապատասխան վարվելու համար հավելյալ գումարներ պահանջելն ու խոչընդոտելը³⁹, նրանց նկատմամբ բռնի ու անօրինական գործողությունները⁴⁰:

Նադիր շահի Հնդկաստանյան արշավանքի ժամանակ Իրանը կառավարող թագաժառանգ Ռեզա Ղուլի Միրզայից Ղազար Զահեկեցի կաթողիկոսի 1740 թ. ստացած հրովարտակով, նրա խնդրագրին համապատասխան, արգելվում է խոչընդոտել հայերին եկեղեցական զանգերը հնչեցնելու ու ծիսական արարողությունները անցկացնելու հարցը⁴¹: Նմանատիպ հրովարտակներ են հրապարակում 1741 թ. Նադիր շահը և 1748 թ. Իբրահիմ Միրզան. ըստ այդմ՝ արգելվում է պետական պաշտոնյաների ու հոգևորականների

³⁴ Կոստիկյան 2018, 71-85:

³⁵ Առաքել Դավրիժեցի 1990, 94:

³⁶ Թաջիրյան 2017, 20-23, 54, 135-6, 143-144, 156:

³⁷ Կոստիկյան 2005, վավ. 31, 34:

³⁸ Կոստիկյան 2005, վավ. 37:

³⁹ Կոստիկյան 2005, վավ. 28:

⁴⁰ Կոստիկյան 2005, վավ. 31, 37:

⁴¹ Կոստիկյան 2008, վավ. 14:

միջամտությունը հայերի հավատին վերաբերող խնդիրներին, ինչպես նաև նրանց կրոնական օրենքների խախտումը⁴²:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ներկայացված վավերագրի խնդրագրի հատվածում նշված չորրորդ կետով ամրագրվում էր իրանական տիրապետության ներքո արդեն իսկ Սեֆյան և Աֆշարական շահերի հրովարտակներով հաստատված՝ հայերի՝ կրոնական օրենքներին հետևելու և ծիսական արարողությունները կատարելու ազատությունը:

Հայության պաշտպանությունը բռնի մահմեդականացումից Հայոց եկեղեցու կենսական խնդիրներից էր: Չնայած բռնի մահմեդականացումը արգելվում էր դեռևս Մուհամմադ մարգարեի անունից քրիստոնյաների հետ կնքված պայմանագրերով ու իսլամի օրենքներով⁴³, այնուամենայնիվ, դրանք չէին բացառում նման երևույթները, որոնք հաճախ կապվում էին իշխանական օղակներում տիրող տրամադրությունների և մահմեդական հոգևորականության ազդեցության հետ:

Դեռ Սեֆյան վաղ ժամանակներից շահական հրովարտակով կաթողիկոսների իրավունքների հաստատման հետ պարտադրվում էր հայության հնազանդությունը կաթողիկոսի կամքին ու խոսքին: Եղիազար Այնթաբցի և Նահապետ Եդեսացի կաթողիկոսներին տրված հրովարտակներով էլ արգելվում էր յուրաքանչյուր միջամտություն կաթողիկոսական գործերին⁴⁴:

Կաթողիկոսին էր վերապահված հայության կրոնական և ներհամայնքային զանազան խնդիրների կարգավորումը: Այս առումով հատկանշական է մասնավորապես Նադիր շահի կողմից, Ղազար Զահկեցի կաթողիկոսի խնդրագրին համապատասխան, 1741 թ. հրապարակված հրովարտակը, որով արգելվում է թե՛ հայ և թե՛ մահմեդական պաշտոնյաների միջամտությունը հայերի կրոնական օրենքների կարգավորմանը⁴⁵: Վերոհիշյալ կաթողիկոսին հաջողվում է հետագա աֆշար տիրակալ Իբրահիմ շահից ևս կարևոր փաստաթուղթ ձեռք բերել, որով արգելվում էր նաև տեղի մահմեդական բարձրաստիճան հոգևորական շեյխ ուլ-իսլամի և շարիաթական դատարանը գլխավորող ղազիի միջամտությունը հայության կրոնական և այլ ներքին խնդիրների կարգավորմանը: Այսպիսով, ներկայացված վավերագրի 5-րդ կետի շարադրանքի հիմքում վերոհիշյալ փաստաթղթերով կաթողիկոսին տրված իրավական ինքնուրույնությունն էր իր ենթակաների նշանակման, պաշտոնազրկման ու հայ ժողովրդի ներքին կրոնական խնդիրները կարգավորելու հարցում:

⁴² Կոստիկյան 2008, վավ. 20, 31:

⁴³ Այդ մասին տե՛ս Մկրտումյան 2018, 24-25:

⁴⁴ Կոստիկյան 2005, վավ. 56, 57:

⁴⁵ Կոստիկյան 2008, վավ. 20:

Սեֆյան պետության անկմանը հաջորդած խժոժությունների և Օսմանյան տիրապետության ծանր իրողությունների հետ է կապվում հրամանագրի վեցերորդ կետը, որով արգելվում էր պատերազմական իրադարձությունների ժամանակ ունեցվածքը էջմիածնին պահ տված անձանց հետ պահանջել իրենց գույքը, որը, ըստ խնդրագրի՝ «մի մասը ետ էր վերցրել, մի մասը այս ընթացքում ոչնչացել է, մի մասն էլ հաքիմներն են զավթել»:

Այս հարցն առաջին անգամ չէ, որ շոշափվում է պարսկերեն հրովարտակներում: Ինչպես պարզ է դառնում Ղազար Զահկեցի կաթողիկոսի՝ 1740 թ. Իրանի փոխարքա Ռեզա Ղուլի Միրզայից ստացած հրովարտակից, խոսքը Թահմասպ Միրզայի կողմից իր 1731/2 թ. Երևանյան արշավանքի ժամանակ այնտեղի գաղթեցված քոչվոր ցեղերի ունեցվածքի մասին էր⁴⁶:

Եզրակացություններ

Երևանի խանի 1760 թ. հրովարտակը՝ հրապարակված Հակոբ Շամախեցու ընդարձակ խնդրագրին կից, ամփոփ վերահաստատում է նախորդ իրանական շահերի տված հրամանագրերը Հայոց եկեղեցու, Մայր Աթոռ Սրբ. էջմիածնի ու հայության զանազան խնդիրների կապակցությամբ և իրավունքների հակիրճ բովանդակությամբ, որոնք ներկայացված են 13 կետերով:

Այս վավերագիրը բացառիկ կարևորություն ունի, քանի որ ամփոփ շարադրում և ամբողջացնում է իրանական տիրապետության ներքո Հայոց եկեղեցու, նրա հոգևոր կենտրոնի և նրա հպատակների իրավունքները մեկ փաստաթղթում, որը հետագայում վերահաստատվում է նաև Իրանի մյուս տիրակալների հրովարտակներով:

Վավերագիրը մատնանշում է Հայոց եկեղեցու և հայության կայուն ու ամուր դիրքերը Երևանի խանությունում, որոնք ճանաչում ու վավերացնում էր խանական իշխանությունը:

Գրականություն

Առաքել Դավրիժեցի 1990, Գիրք պատմութեանց, աշխ. Լ.Ա. Խանլարյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 595 էջ:

Դանիելյան Գ. 2016, Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմության արաբական սկզբնաղբյուրները, «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», Երևան, «Գիտություն», էջ 200-287:

Թաջիրյան Է. 2017, Նոր Զուղան եվրոպական աղբյուրներում 17-18-րդ դարերում, մաս Բ, Երևան, Մեսրոպ արք. Աշճեան Մատենաշար 173, 294 էջ:

Կոստիկյան Ք. 2008, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ IV, Երևան, «Նաիրի», 388 էջ:

Կոստիկյան Ք. 2018, Հայոց եկեղեցու իրավական և սոցիալ-տնտեսական դրության հարցերն ըստ Մատենադարանի ԺԷ-ԺԸ դարերի պարսկերեն վավերագրերի, «Էջմիածին», Գ, էջ 68-86:

⁴⁶ Կոստիկյան 2005, վավ. 16:

- Կոստիկյան Ք. 2019, Պարսից գրագրության մէջ Հայոց կաթողիկոսներին տրուած տիտղոսն ու պատուանունները, Հանդէս ամսօրեայ, 1-12, էջ 121-133:
- Կոստիկյան Ք. 2021, Մատենադարանի պարսկերէն հրովարտակները, պրակ V, Երևան: Մատենադարանի հրատ., 576 էջ:
- Հակոբյան Վ. 2021, Երևանի խանութայն ԺԸ դարի երկրորդ կեսի պատմութեան հարցերն ըստ Մատենադարանի վավերագրական նյութերի, Մատենադարանի հրատ, 200 էջ:
- Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվ, վավերագիր (գույքահամար 398):
- Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավերագիր 428 - ՄՄ, կ/դ, թղթ. 1 գ, վավ. 428:
- Մկրտումյան Գ. 2018, Մուսուլմանների կողմից տրված հրովարտակ-պայմանագրերի դերը քրիստոնյա բնակչության կյանքում, Արևելագիտության հարցեր, XIV, էջ 14-27:
- Սիմեոն Երեւանցի 2003, Ջամբո, Երևան, «Մուղնի», 546 էջ:
- Փափագյան Հ. 1956, Մատենադարանի պարսկերէն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 315 էջ:
- Փափագյան Հ. 1959, Մատենադարանի պարսկերէն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 593 էջ:
- Օրմանյան արք. Մաղաքիա 2001, Ազգապատում, Հայ Ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով, Բ. հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3894 էջ:
- Margaryan G. 2022, The Phenomenon šiltāqāt and its Reflections in the Armenian Historical Milieu, Bulletin of the Institute of Oriental Studies, vol. 2 (1), p. 22-30.

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆԻ 1760 Թ. ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Քրիստինե Կոստիկյան

Ամփոփում

Սրբ Էջմիածնի իրավունքների վերաբերյալ Երևանի Հուսեյն Ալի խանը 1760 թ. հրովարտակ է հրապարակում: Հրովարտակը կցված է կաթողիկոս Հակոբ Շամախեցու խնդրագրին, որտեղ ոչ միայն Մայր Աթոռ Սրբ Էջմիածնի, այլև ողջ Հայ առաքելական եկեղեցու ու նրա հպատակների իրավունքներն են ամփոփված 13 կետերով: Դրանցում ամրագրված են հետևյալ իրավունքները. Սրբ Էջմիածնի՝ իր կալվածքներից ու այլ սեփականությունից հարկեր ստանալու իրավունքը, նրանց պաշտպանվածությունը ոտնձգություններից և մասնակի ապահարկությունը, եկեղեցական արարողությունները կատարելու ազատությունը, եկեղեցու սպասավորների շրջագայությունը հարկեր հավաքելու նպատակով առանց մաքսավճարի իրականացնելու իրավունքը և այլն: Փաստաթուղթը վավերացնում է պարսկական տիրապետության շրջանում Մայր Աթոռ Սրբ Էջմիածնի ու հայերի ունեցած հատուկ սոցիալ-տնտեսական և իրավական դրությունը արդեն խանության ժամանակաշրջանում:

Բանալի բառեր՝ Հայոց եկեղեցի, կաթողիկոս, Մայր Աթոռ Սրբ Էջմիածին, իրավունք, փաստաթուղթ, հրովարտակ, իրավական կարգավիճակ:

**УКАЗ ЕРЕВАНСКОГО ХАНА О ПРАВАХ ПЕРВОПРЕСТОЛЬНОГО СВЯТОГО
ЭЧМИАДЗИНА ОТ 1760 Г.**

Кристине Костилян

Резюме

Хан Еревана Хусейн Али в 1760 г. обнародовал указ о правах Святого Эчмиадзина. Указ прикреплен к прошению католикоса Акопа Шамахеци, где права не только Святого Эчмиадзина, но и всей Армянской Апостольской церкви и ее последователей обобщены в 13 пунктах, а именно: право получения налогов с поместий и другой недвижимости Святого Эчмиадзина, которые были защищены от всяких посягательств и имели частичный налоговый иммунитет; право свободного проведения религиозной службы; право освобождения служителей церкви, занимавшихся сбором налогов, от таможенных пошлин и т.д. Документом утверждено особое социально-экономическое и правовое положение Первопрестольного Святого Эчмиадзина, признанное еще во время персидского господства, уже в период ханства.

Ключевые слова – Армянская церковь, католикос, Первопрестольный Святой Эчмиадзин, право, документ, указ, юридическое положение

**THE DECREE OF YEREVAN KHAN ON THE RIGHTS OF THE MOTHER SEE OF HOLY
ETCHMIADZIN ISSUED IN 1760**

Kristine Kostikyan

Abstract

Khusayn 'Alī Khān of Erevan issued a decree on the rights of Holy Etchmiadzin in 1760. The decree is attached to the petition of Catholicos Hakob Shamakhetsi where the rights of not only the Mother See of Holy Etchmiadzin but also the Armenian Apostolic Church and its subjects in general are summarized in 13 clauses. It included the following rights: the right to receive the taxes of the estates and other property of Holy Etchmiadzin, which were protected from any encroachment and had partial tax exemption, the right of free performing divine service, tax-free passage of boundaries by church servants with the purpose of collecting church tributes and donation, etc. The document asserts the special social-economical and juridical position of the Mother See of Holy Etchmiadzin and Armenians under Persian rule, at the moment in Erevan khanate.

Key words – Armenian Church, catholicos, Mother See of Holy Etchmiadzin, right, document, degree, legal status.

Բնագրով ու թարգմանաբար ներկայացված փաստաթղթի երկու միմյանց միացված մասերը



Ա. Հուսեյն Ալի խանի հրամանագիրը



Բ. Հակոբ Շամախեցի կաթողիկոսի խնդրագիրը